ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11, 1962 Общественные науки

Գ. Ֆիրացյան

ՀԱՑԱՎԱՆ ԱՄՐՈՑԻ 1961 Թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Հացավան գյուղը գտնվում է Երևանից Գառնի տանող նոր խճուղու մոտ, Երևանից 20 կմ, իսկ Գառնիից 10 կմ հեռավորության վրա։

Գյուղի հյուսիսային մասում, կոլտնտեսության դոմերից ոչ հեռու, մի բարձունքի վրա, տեղադրված է եղել հին ամրոցը, սրի մնացորդները ուսումնասիրվում են այժմ Գառնիի հնագիտական արշավախմբի մի ջոկատի կողմից (նկ. 1)։



Նկ. 1. Ամրոցի ընդհանուր տեսքը

Բարձունքը, որը տեղի բնակիչները կոչում են «Եղոյի դիք» կամ «Գոռ իշխանի բերդ», երկու արևելյան և արևմտյան կողմերից եզերված է ձորերով կամ ձորակներով, իսկ երրորդ՝ հյուսիսային մասով կապված է ցամաքի հետ, որտեղ գտնվում են գյուղի մշակելի տարածությունները։ Բարձունքի հարավային լանջի ստորոտից սկսվում է գյուղը, ուր կարելի է իջնել հարավ-արևմտյան անկյունից։

Հացավանի հին ամրոցը ուշադրության է արժանացել Գառնիի պեղումների կապակցությամբ։

Դեռևս 1952 թ. գյուղի բնակիչները պրոֆեսոր Բ. Ն. Առաքելյանին հանձնել էին ամրոցի շրջակայքում հայտնաբերված մի դրամ, որը ինչպես հետագայում պարզվեց, հանդիսանում էր Տիգրան 2-րդի պղնձե դրամ։

1953 թ. աշնանը Գառնիի արշավախմբի անդամներ Բ. Առաքելյանը, Գ. Կարախանյանը և Գ. Տիրացյանը փոքրածավալ պեղումներ կատարեցին այստեղ։ Գյուղի բնակիչների ասելով ամրոցը դեռևս մեր ժամանակների 20-ական թվականներին շրջապատված է եղել բավական բարձր պարիսպներով, որոնք սակայն քանդվել, իսկ քարերը օգտագործվել են գյուղի շինարարական կարիքների համար։

1953 թ., կարճատև աշխատանքների ընթացքում, հնարավոր եղավ պարզել պարսպի շրջագծի հյուսիսային և արևմտյան հատվածների մոտավոր պատկերը։ Այն ժամանակ մենք ենթադրում էինք, որ պահպանվել են միայն պարսպապատի հիշյալ կողմերի ամենաներքևի շարքը կամ լոկ հիմքերը, իսկ նրա հարավային և արևելյան հատվածները, չնչին բացառություններով, իսպառ քայքայված էին թվում։

Բնակիչները տեղեկացրին գյուղի տերիտորիայում բացվող կարասային և սալարկղային թաղումների մասին և հանձնեցին կավե երկու անոթ և կոնդլոմերատից պատրաստված թասի մի բեկոր, հավանաբար անտիկ ժամանակաշրջանից։

Ամրոցում փոքր ծավալի աշխատանքներ են կատարվել նաև 1960 թ. աշնանը, մասնակցությամբ Գառնիի արշավախմբի աշխատակիցներ Ժ. Խաչատրյանի և Մ. Ղարիբյանի։ Ամրոցի հարավային ծայրում բացված մի քառակուսուց դուրս են բերվել ն. մ. թ. և մ. թ. առաջին դարերի խեցեղեն։ Տեղական դպրոցի ուսուցիչներից մեկը, ամրոցի մակերեսից, պատահարար գտավ մեկ ծայրը մշակված բրոնզե մի շքասեղ, որը համապատասխանում է անտիկ ժամանակաշրջանի այդ տիպի առարկաներին։

Հացավանի ամրոցի սիստեմատիկ պեղումները սկսվեցին 1961 թ. աշնանը և տևեցին հոկտեմբերի 26-ից մինչև նոյեմբերի 10-ը։ Աշխատանքներին մասնակցել են ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Լ. Բարսեղյանը և ասպիրանտ Ա. Քալանթարյանը։

Պեղումների նպատակն էր հետազոտել ամրոցի բուն տերիտորիան, ինչպես նաև պարզել պարսպապատի ընդհանուր հատակագիծը (նկ. 2)։ Համեմատաբար լավ վիճակում է մնացել պարսպապատի հյուսիսային մասը։ Այստեղ, մինչև հիմքը, բացվեց պարսպի արտաքին երեսը, կազմված 6 շարքից, պահպանված մաքսիմալ բարձրությունը — 2,40 մ։ Հյուսիսային այս հատվածն ունի հստակ կոնտուր։ Մեջտեղում դուրս է ցցվում կիսաբոլորաձև աշտարակը, իսկ անկյուններում տեղադրված են կլոր աշտարակներ (պայմանական տրամագիծը 6 մետրից — 7,70 մ.)։ Ավելի վատ վիճակում է պարսպի արևելյան մասը, տեղ-տեղ հիմքերն անհետանում են, բայց ընդհանուր գիծը հեշտությամբ է ընթերցվում։ Պարիսպը օժտված է փոքր, քառանկյունի աշտարակաձև ելուստներով, կոնտրֆորսներով, որոնք կոչված էին ավելի ամրակուռ դարձնելու պարսպի տվյալ մասը և հեշտացնում էին նրա պաշտպանությունը (կոնտրֆորսների չափերը—երկարությունը 2,50 մ — 4,20 մ, հաստությունը 1 մ — 1,30 մ, հեռավորությունը իրարից՝ 2,60 մ — 8,30 մ)։ Հատկանշական է նրանց մեծ քանակը (7 հատ) համեմատաբար փոքր տարածության (50—60 մ) վրա։ Կոնտրֆորսների հաճախականությունն այստեղ բացատրվում է նրանով, որ ամրոցն այս լանջից ավելի մատչելի էր, քանի որ նրա ստորոտով անցնում էր ոչ շատ խորը ձորակ։ Ամրոցի հարավային կող-

մում բացվել է առայժմ միայն մեկ կոնտրֆորս (երկարությունը՝ 2, 70 մ, խորությունը՝ 1,40 մ)։

Արևմտյան մասի պարսպի գիծը մեզ հայտնի էր նախորդ պեղումից. այստեղ բացվեց նաև պարսպագիծը՝ հյուսիս-արևմտյան կլոր աշտարակին միացնող հատվածը։ Այս կողմի վրա կան չորս կոնտրֆորսի հետքեր։ Սրանք ավելի մեծ են և իրարից ավելի հեռու։ Կասկած չի կարող լինել, որ պեղումները փոփոխություններ կմտցնեն այս հատվածի կոնտուրի մեջ ևս։



Նկ. 2. Ամրոցի հատակագիծը

Պարսպապատը կառուցված է միջին չափսերի անմշակ լեռքարերից, հարթ երեսը դեպի դուրս։ Անկյունային մասերում հանդիպում են մինչև 1 մ երկարություն ունեցող քարեր, բայց սովորական քարերը 0,40 — 0,50 մ-ից մեծ չեն։ Նրանք շարված են շատ կանոնավոր ձևով, միացված են հողե շաղախով և շատ ամրակուռ կերտվածքի տպավորություն են թողնում (նկ. 3)։ Պարսպի հյուսիսային հատվածի ներսի երեսի որոնման աշխատանքները ցույց տվեցին, որ այս մասում գոնե, պարսպի հաստությունը կարող էր հասնել մինչև 3,75 մ։

Ընդհանուր ռելեֆին և տեղանքին համեմատ, պարիսպը դրված է ուղղակի մայր ժայռի վրա. հարկավոր դեպքում հիմքերում խիճ է լցված եղել։

Ամրոցի ամենամատչելի զուգահեռները մեր կարծիքով պետք է փնտրել Առաջավոր Ասիայի, Միջագետքի և Սիրիայի պարթևական և հռոմեական ժա-

մանակաշրջանի համապատասխան հուշարձաններում և գուցե Միջին Ասիայի՝ Խորեզմի հին ամրոցներում[1]։

Արդեն հիմա կարելի է ասել, որ Հացավանի ամրոցը, իր բավական զարգացած հատակագծով, չնայած տեղանքի թելադրանքից բխող որոշ անսիմետրիկության, իր հավաքված, կուռ շրջագծով, ամրոցաշինարարական բարձր ունակությունների և տրադիցիաների մասին վկայող մտահղացման արդյունք է։

Նկ. 3. Պարսպի հյուսիսային հատվածի կիսակլոր աշտարակը

Ամրոցի ներսում պեղել ենք կենտրոնական մասը և հարավային ծայրը։ Երկու տեղերում էլ բացվել են կանոնավոր պատերի մնացորդներ, միջին չափերի լեռքարերից շարված (պատերի հաստությունը — 0,90 — 1,20 մ, պահպանված բարձրությունը մինչև 1 մ)։ Պատերը սվաղված են եղել և հարդարված։ Այդ մասին են վկայում սպիտակ, բավական բարձրորակ կրասվաղի մի քանի բեկորները, որոնք գտնվեցին կենտրոնական քառակուսիներում։ Դրանց հետ դուրս եկան նաև սենյակների նելքին հարդարանքի ռելեֆ բիվերի և գոտիների գիպսե բեկորներ։ Սրանք լավ, հստակ պրոֆիլավորված բեկորներ են, միջին մասը կորությունով դեպի ներս, ներքևից և վերևից ղուդահեռ առուակոսներով (բարձրությունը 5 սմ, հաստությունը 6 սմ, պահպանված երկարությունը 14—23 սմ) (նկ. 4)։ Պատերի առաստաղների հարդարումը գիպսից պատրաստված ձուլածո գոտիներով տարածված մի սովորություն էր հելլենիստական աշխարհում։ Այդ ռելեֆ հարդարանքները ձուլվում էին հատուկ կաղապարների մեջ և ապա շաղախով փակցվում պատին կամ դրոշմվում էին ուղղակի պատի վրա, դեռևս չչորացած գիպսի կամ սվաղի շերտի վրա[2]։

---

[1] Б. Н. Аракелян, Гарни, II, էջ 88, ծանոթ. 1։

[2] „Эллинистическая техника". Сборник статей под ред. акад. И. И. Толстова. М—Л, 1948, էջ 131—132։

Հարավային քառակուսում հայտնաբերվել են երեք կարասների մնացորդներ, մեկի մեջ՝ կրային զանգված։ Կարասների բեկորներ հանդիպում են ամրոցի մյուս մասերում ևս, այնպես որ արդեն հնարավոր է բնորոշել կավանոթների այս տիպը։ Սրանք հաստ պատերով մեծ անոթներ են բաց կարմրավուն մակերեսով (տրամաչափը 0,80 մ)։ Շատ բնորոշ են շրթները, հաստ, դեպի դուրս ցցվող, վերևից տափակ պսակով։



Նկ. 4. Գիպսե ձուլածո քիվի բեկորներ։

Խեցեղենը առատորեն է դուրս գալիս։ Այն կարելի է նախնական դասակարգման ենթարկել։

Մի փոքրաթիվ խումբ կապվում է հայկական լեռնաշխարհի հնագույն Լպոխաների, էնեոլիթի և բրոնզե դարի կերամիկայի հետ։ Այդ շրջաններին վերաբերող ամրոցական անոթներ հայտնաբերվել են գյուղում՝ պատահաբար։ Երկրորդ խումբը կազմում են ն. մ. թ. 5—4 դարերի կերամիկայի հետ առնչվող բեկորները։ Մի ստվար խումբ, բաց գույնի, անգորով պատած անոթների խեցիները, որոշակիորեն կապվում են մ. թ. առաջին դարերի Գառնիի կավանոթների հետ։ Չորրորդ խումբը, որն ամենից հետաքրքիրն է, որովհետև առաջին անգամն է դուրս գալիս բավական մեծ քանակությամբ սիստեմատիկ պեղումների ընթացքում, նոր տիպի գունազարդ կերամիկա է։ Բաց գույնի անգորի վրա (դեղին, օխրա, կարմրավուն) հանդիպում են տարբեր հաստության գոտիներ, հաճախ առանձին, երբեմն զուգահեռ սև, սրճագույն, կարմիր, շագանակագույն, վարդագույն։ Երբեմն զարդերը բարդանում են. հատվող գծեր, դանցաձև օրնամենտ, և նույնիսկ ձկան նկար հիշեցնող զարդ, սև ներկով արված, կարմրավուն ֆոնի վրա (նկ. 5)։

Այս բնորոշ խումբը գալիս է հարստացնելու մեր դիտելիքները Հայաստանի խեցեգործության զարգացման բիչ ծանոթ մի ժամանակաշրջանի վերաբերյալ։ Նման կերամիկայի կարելի է հանդիպել Փոքր Ասիայի, հարավային Ռուսաստանի և Ղրիմի հելլենիստական ժամանակաշրջանի կենտրոններում։

Պեղված ոսկորների թվում, բժշկական գիտությունների թեկնածու Հ. Աղիղյանի բնորոշմամբ, հանդիպում են խոշոր եղջյուրավորներից՝ կովի և ցուլի, մանր եղջյուրավորներից՝ ոչխարի և այծի, ամենակեր կաթնասուններից՝ խոզի մնացորդները։



Նկ. 5. Նոր տիպի խեցեղենի նմուշներ

Այս տարվա պեղումներից հետո կարելի է ենթադրել, որ Հացավանի հուշարձանը կարող է ժամանակակից լինել Գառնիի ամրոցին։ Այդ դեպքում նրա աշխարհագրական դիրքը Գառնիի հանդեպ և մոտիկությունը, նրա չափսերն ու բնույթը թույլ են տալիս ենթադրելու, որ հուշարձանը հանդիսանում է Գառնիի առաջապահ ամրոցը։ Նախքան Գառնի հասնելը Երևանից եկող հին ճանապարհը անցնում է Հացավանով։ Ամրոցի արևմտյան բլուրներից երևում են Վարդաշենը, Նոր Արեշը և Արինբերդը, այսինքն Երևանի հնագույն մասը։ Այնտեղից մինչև Հացավան 9—10 կմ է։ Արարատյան դաշտի այս հատվածից դեպի Գառնի շարժվող զորքը անխուսափելիորեն պետք է անցներ Հացավանի ամրոցի մոտով։ Արարատյան դաշտից Գառնի տանող մյուս ճանապարհը գալիս էր Արտաշատից և անցնում էր, ըստ երևույթին, Դվինի և Տիգնունիի ամրոցների մոտով։ Այս ճանապարհի նախալեռնային հատվածը, Ազատի ձորին զուգահեռ, նույնպես ընկնում էր Հացավանի զորակայանի տեսադաշտի մեջ։